ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.6-26

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2026թ. մարտի 12-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի «2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N4094-Լ հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթին ներկայացվել է 2 (երկու) հայտ, հետևյալ ֆինանսական առաջարկներով՝

- «ԲՈԳՈՍՍԻ» ՍՊԸ-ի (14,980,000.0 (տասնչորս միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)),
- «Նիկոն» ՍՊԸ-ի (15,000,000.0 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)) կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 2 (երկու) կազմակերպության՝

- «ԲՈԳՈՍՍԻ» ՍՊԸ-ի,
- «Նիկոն» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- «ԲՈԳՈՍՍԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի.

- 2 և 3 ենթակետերով պահանջվող տեղեկատվությունը, այն է՝ կազմակերպության պորտֆոլիոն՝ լուսանկարների, տեսանյութերի (վիդեոների) և ռիիլերի (reel-երի) առկայությամբ և նախկին փորձը հավաստող առնվազն 3 պայմանագրեր, ներառյալ հանձնման-ընդունման ակտեր կամ այդ պայմանագրի կատարումն հավաստող այլ փաստաթղթեր և/կամ տեղեկանքներ, տրամադրված է լինքերով, սակայն լինքերի ժամկետը մարտի 21-ին սպառվում է, ինչից հետո ողջ տեղեկատվությունն անհասանելի է լինելու և հետագայում չեն երևալու գնահատման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, ինչը խնդրահարույց և ռիսկային է, ինչպես գնահատող հանձնաժողովի, այնպես էլ ընկերության համար:

- «Նիկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի.

- 3 ենթակետերով պահանջվող տեղեկատվությունը, այն է՝ նախկին փորձը հավաստող առնվազն 3 պայմանագրեր, ներառյալ հանձնման-ընդունման ակտեր կամ այդ պայմանագրի կատարումն հավաստող այլ փաստաթղթեր և/կամ տեղեկանքներ, տրամադրված է ոչ լիարժեք: Ներկայացված է միայն մեկ պայմանագրի հանձման ընդունման ակտ:

Միաժամանակ, ներկայացված առաջարկում բացակայում է գործողությունների փուլային բաժանումը:

Կայացավ քննարկում, որի արդյունքում

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպության՝

- «ԲՈԳՈՍՍԻ» ՍՊԸ-ի,
- «Նիկոն» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Լուծարել** Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթը և հայտարարել նոր մրցույթ:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ա.Մկրտչյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Ա.Ոսկանյան - _____

Շ.Հովսեփյան - _____